ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/50

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Հ. Ղազարյանի (լիազորագիր, տրված՝ 09.07.2019թ.)

Գ. Պրազյանի (լիազորագիր, տրված՝ 15.07.2019թ.

քննելով ՀՀ ՇՄ Նոր Կյանքի համայնքապետարանի կարիքների համար ներհամայնքային փողոցային լուսավորության ցանցի ընդլայնման և արևային համակարգի տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ 2019/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից 09.07.2019թ. ներկայացված (10.07.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/50 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 09.07.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ 2019/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում ներհամայնքային փողոցային լուսավորության ցանցի ընդլայնումը և արևային համակարգի տեղադրման աշխատանքները:

Ի թիվս այլ ընկերությունների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.06.2019թ ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետով կայացվել է Ընկերությանն առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

17.06.2019թ Ընկերությունն էլ. փոստի միջոցով ծանուցվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Ընկերության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետներում:

Հայտի գնահատման ընթացքում հանձնաժողովի կողմից արձանագրվել են մի քանի թերություններ, որոնց շտկման նպատակով 19.06.2019թ. հանձնաժողովի նիստը կասեցվել է 1 աշխատանքայի օրով և Ընկերությանը ներկայացվել շտկման վերաբերյալ համապատասխան ծանուցում, որի բովանդակությունը ներկայված է ստորև.

«Հարգելի մասնակից, Ձեր կողմից ներկայացված որակավորումը հաստատող փաստաթղթերը ներկայացված են թերի, մասնավորապես.

– մասնագիտական փորձառության որակավորումը հաստատող փաստաթղթերում բացակայում են հրավերի 2.5 «բ» ենթակետով նախատեսված նմանատիպ

աշխատանքների կատարման փորձը հաստատող պայմանագրերի հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև փաթեթում բացակայում է հրավերի ՄԱՍ I 2.5 1-ին մասով նախատեսված արևային համակարգի տեղադրման աշխատանքների պայմանագրերը:

- «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշով սահմանված ավտոամբարձիչի համար Ձեր կողմից ներկայացված տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը սահմանված է մինչև 01.09.2019թ., մինչդեռ հրավերով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանված 2019 թվականի սեպտեմբերի 30-ը:

Վերոգրյալի հետ կապված, ինչպես նաև առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով, Հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին Ձեր համապատասխանությունը ապահովելու նպատակով, խնդրում ենք 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել համապատասխան փաստաթղթերը, այլապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասի համաձայն, Ձեր հայտը կմերժվի:»:

Ընկերության կողմից վերոնշյալ անհամապատասխանությունները շտկվել և ներկայացվել են հանձնաժողովի սահմանված ժամկետներում, բացառությամբ արևային համակարգի տեղադրման աշխատանքների պայմանագրերի մասով ներկայացված պահանջի:

Հրավերի առաջին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի ա) պարբերությամբ սահմանված է, որ Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում էներգետիկ, արևային ֆոտովոլտային կայանների աշխատանքների կատարված լինելը և փակագծերում մասնավորեցված է, որ շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները, ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ հրավերով ներկայացված աշխատանքների ծավալաթերթ-նախահաշվում արևային համակարգի տեղադրման աշխատանքներ ներառված չեն (Պայմանագրով սահմանված է, որ աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին,

աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան) Ընկերության կողմից որպես նմանատիպ աշխատանքների պայմանագիր ներկայացվել է էներգետիկ լիցենզիայի շրջանակներում կատարված աշխատանքները:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 65-րդ կետի գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Ճանապարհաշինարարական աշխատանքների՝ ներառյալ դրանց իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների դեպքում տնտեսական գործունեության խմբերը սահմանվում են՝ հաշվի առնելով գնման առարկայի տեսակը, իսկ շինարարական ծրագրերի դեպքում՝ հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Ի լրումն բողոքի՝ 18.07.2019թ. ներկայացրած գրությամբ՝ Ընկերությունը հայտնել է, որ Պատվիրատուի կողմից հայտնած այն դիրքորոշումը, համաձայն որի՝ արևային համակարգի տեղադրումը չի հանդիսանում կապիտալ շինարարության բաղադրիչ և չի համարվում լիցենզավորման ենթակա գործունեության, ինչի հիման վրա հրավերով սահմանվել է արևային համակարգի տեղադրման առանձին փորձ ունենալու պահանջը, ընդունելի չէ, քանի որ հրավերով սահմանված է, որ մասնակիցը ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները կատարելու համար պետք է ունենա էներգետիկ լիցենզիա, իսկ արևային համակարգը ներառված է տվյալ ծավալաթերթ-նախահաշվում (ծավալաթերթ-նախահաշվում արևային համակարգի տեղադրման

աշխատանքներ սահմանված չեն): Անդրադառնալով Պատվիրատուի կողմից արևային համակարգի տեղադրումը կապիտալ շինարարության բաղադրիչ չհանդիսանալու պնդմանը, Ընկերությունը գտնում է, որ նույն տրամաբանությամբ ծավալաթերթից կարող էր առանձնացվել վարդակների տեղադրումը և պահանջել վարդակների առանձին փորձ:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 21.06.2019թ ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համապատասխան կետով Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու մասին:

«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.07.2019թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ ՇՄ Նոր Կյանքի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ ՇՄ Նոր Կյանքի համայնքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) 12.07.2019թ. թիվ 012-0173/19 գրությամբ հայտնել է հետևյալը.

Նոր Կյանքի համայնքապետարանի կողմից 07.06.2019թ. կազմակերպվել է «ՇՄՆԿՀ – ԳՀԱՇՁԲ 2019/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ՀՀ Վարչապետի 19.03.2019թ. N 278-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական ժողովի քննարկմանը ներկայացված և դրական եզրակացություն ստացած՝ ՀՀ Շիրակի մարզի Նոր Կյանքի բնակավայրի ներհամայնքային փողոցային լուսավորության ցանցի ընդլայնման և արևային համակարգի տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով:

Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն, որը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Սահմանված եռօրյա ժամկետում Ընկերությունը ներկայացրել է հրավերով պահանջված որակավորումը հավաստող փաստաթղթերը: Գնահատող հանձնաժողովի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից տրամադրված փաստաթղթերն ամբողջական չեն, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավերի պահանջների նկատմամբ գոյություն ունեն անհամապատասխանություններ, Ընկերությանը տրվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետով սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն:

Սակայն նշված ժամկետում Ընկերությունը ներկայացրել է գրություն այն մասին, որ արդեն իսկ ներկայացրել է «էներգետիկ» լիցենզիայի շրջանակներում արված փողոցային լուսավորության համակարգի անցկացման նմանատիպ աշխատանքների կատարման պայմանագիր, արևային համակարգի տեղադրման փորձ չունեն և իբրև այդ մասով գնահատող հանձնաժողովի պահանջը համարվում է ոչ իրավաչափ:

Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է Ընկերության ներկայացրած փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել Ընկերության հայտը:

Ընթացակարգի հրավերի առաջին մասի 2.5 ենթակետով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշն ապահովելու համար սահմանված է եղել պահանջ էներգետիկ, արևային ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքների կատարման փորձ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 02.07.2009թ. N 777-Ն որոշման 6-րդ կետի 4-րդ ենթակետում նշված նմանատիպ աշխատանք (քաղաքաշինության բնագավառում էներգետիկայի լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ), իսկ արևային համակարգի տեղադրումը չի համարվում կապիտալ շինարարության բաղադրիչ, այլ կարգավորվում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով, որի 23-րդ հոդվածի «դ» պարբերության համաձայն՝ էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները լիցենզավորման ենթակա չեն, եթե այդ համակարգերի դրվածքային հզորությունը չի գերազանցում 150 կՎտ-ը:

Կարգի 65-րդ կետով սահմանվում է, որ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Այսպիսով՝ արևային համակարգի տեղադրումը քաղաքաշինության բնագավառում էներգետիկայի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներին չի պատկանում, այլ հանդիսանում են տնտեսական գործունեության տարբեր խմբեր:

Պատվիրատուն տեղեկացրել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանելիս հիմք է ընդունել համապատասխան ոլորտի մասնագետի կողմից տրված խորհրդատվությունը (նախագծողի) նախագծին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան գործունեություն իրականացրած կապալառու կազմակերպություն ներգրավելու նպատակով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 23.07.2019թ. թիվ 012-0180/19 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգը նախատեսված է եղել ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների ծրագրով, որի համար նպատակահարմարություն է արտահայտվել ներկայացնել մեկ հայտ:

Ծրագրի վերջնական արդյունքի ընդունումը և վճարումը կատարվելու է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից, համապատասխան հաշվետվության հիման վրա:

Ուղղորդվելով նախարարության համապատասխան մասնագետի կողմից տրված ցուցումով, ըստ որի արևային ֆոտովոլտային համակարգով բացի համայնքի գործող կենտրոններից, պետք է սնուցվի նաև տեղադրվող գիշերային լուսավորության ցանցը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ տրամադրվող ֆինանսական միջոցները պետք է լինեն մեկ ծրագրի և հայտի շրջանակներում, փողոցային լուսավորության համակարգի կառուցման և արևային ֆոտովոլտային համակարգի

տեղադրման աշխատանքների ձեռքբերման մրցույթը նույնպես նախատեսվել է մեկ մրցույթով:

Ինչ վերաբերում է բողոք ներկայացրած անձի ներկայացուցչի առարկությանը, համաձայն որի ծավալաթերթ-նախահաշվում արևային համակարգի տեղադրման աշխատանքները ներառված չեն, Պատվիրատուն պարզաբանել է, որ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փաթեթում գոյություն ունեն տեղային նախահաշիվներ, որտեղ մանրամասնորեն երևում են նյութածախսերը, շինմոնտաժային աշխատանքների արժեքները և այլ հաշվարկները: Նշված հարցը և Ընթացակարգի վերաբերյալ նմանատիպ այլ հարցերը մասնակցի կողմից պետք է բարձրացվեն և պատվիրատուի կողմից պարզաբանվեն մինչև մրցույթին մասնակցելը՝ Հրավերի ՄԱՍ I, 3-րդ բաժնով նախատեսված ժամկետներում և կարգով:

Յուրաքանչյուր մասնակից նախքան հայտ կազմելը և ներկայացնելը պետք է մանրամասնորեն ուսումնասիրի տվյալ հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերն ենթակա են մերժման: Ուստի, այս պարագայում, առանց համապատասխան նմանատիպ աշխատանքների կատարման փորձի մրցույթին մասնակցելը, ինչպես նաև մասնակցի կողմից վերոհիշյալ հարցերի վերաբերյալ բողոքարկման փուլում պարզաբանում ստանալու մոտեցումները խիստ անտրամաբանական են:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.07.2019թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/50 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/50 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ՇՄ Նոր Կյանքի համայնքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ 2019/3» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.06.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, որոնց շտկելու համար Ընկերությանը տրվել է մեկ աշխատանքային օր ժամկետ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, այն հիմնավորմամբ, որ Ընկերության ներկայացրած փաստաթղթերի շտկված տարբերակում բացակայում է արևային էներգիայի ստացման համակարգի տեղադրման նմանատիպ աշխատանքների պայմանագրերի պատճենները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից 09.07.2019թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ ՇՄ Նոր Կյանքի համայնքապետարանի 12.07.2019թ. թիվ 012-0173/19 և 23.07.2019թ. թիվ 012-0180/19 գրությունները՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) ....

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

ՀՀ ՇՄ Նոր Կյանքի համայնքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ 2019/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.06.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հաստատող փաստաթղթերում բացակայում են հրավերի 2.5 կետի «բ» ենթակետով նախատեսված նմանատիպ աշխատանքների կատարման փորձը հաստատող պայմանագրերի հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև

փաթեթում բացակայում է հրավերի ՄԱՍ Ի-ի 2.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված արևային համակարգի տեղադրման աշխատանքների պայմանագրերը:

Ընկերությունը Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է փաստաթղթերի շտկված տարբերակը, սակայն թերություններով, մասնավորապես՝ բացակայում է արևային էներգիայի ստացման համակարգի տեղադրման նմանատիպ աշխատանքների պայմանագրերի պատճենները, ուստի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից քննարկվելու արդյունքում գնահատվել է հրավերի պայմաններին չհամապատասխանող:

Գնահատող հանձնաժողովի նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում **էներգետիկ, արևային ֆոտովոլտային կայանների աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):**

Ընթացակարգի հրավերով սահմանվել է **«էներգետիկ» լիցենզիա** ներկայացնելու պահանջ:

«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացվել է Ընկերության և Զովունի համայնքապետարանի միջև 10.11.2017թ. կնքված «ՀՀԿՄՁՀ-ԳՀԱՇՁԲ 17/07» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագիրը, որի առարկան հանդիսացել է համայնքի 35 և 36 փողոցների փողոցային լուսավորության վերականգնման աշխատանքները, ինչպես նաև «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի և Բերքանուշի համայնքապետարանի միջև 16.02.2018թ. կնքված «ԱՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով

կապալային աշխատանքների կատարման պայմանագիրը, որի առարկան հանդիսացել է գիշերային լուսավորության մոնտաժային աշխատանքների իրականացումը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ուսումնասիրվել են Զովունի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ 17/07» և Բերքանուշի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԱՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրերով ընթացակարգերի հրավերները, որոնց համաձայն «ՀՀԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ 17/07» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված է եղել «էներգետիկ», իսկ «ԱՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով՝ «էներգետիկ» և «բնակելի, հասարակական և արտադրական» ոլորտի լիցենզիաների ներկայացման պահանջ:

Այսպիսով՝ Կարգի 65-րդ կետը սահմանում է, որ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները:

Տվյալ դեպքում Ընթացակարգի հրավերով սահմանվել է «էներգետիկ» լիցենզիա ներկայացնելու պահանջ, Ընկերության կողմից ներկայացված պայմանագրերով նախատեսված աշխատանքները նույնպես իրականացվել են «էներգետիկ» լիցենզիայի շրջանակներում, ուստի Կարգի 65-րդ կետի համաձայն Ընկերության կողմից ներկայացված պայմանագրերով նախատեսված աշխատանքներն Ընթացակարգի իմաստով համարվում են համանման (նմանատիպ), քանի որ դասվում են նույն լիցենզիայի շրջանակին՝ հետևաբար և տնտեսական գործունեության նույն խմբին:

Գտնում եմ, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է բողոքով ներկայացված՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելուն

պարտավորեցնելու պահանջին, ապա բողոքը պահանջի սույն մասով ենթակա է մերժման, քանի որ սույն բողոքի քննության շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ուսումնասիրվել և գնահատվել է միայն Ընկերության կողմից ներկայացված պայմանագրերի (դրանց շրջանակներում իրականացված աշխատանքների) Ընթացակարգի իմաստով նմանատիպ լինելու հարցը, սակայն չեն ուսումնասիրվել Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պայմանագրերին կից (այդ թվում նաև պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար) ներկայացվող փաստաթղթերը: Հետևաբար նշված փաստաթղթերի գնահատումը պետք է իրականացվի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից, որից հետո միայն Ընկերության հայտը կարող է համարվել Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող կամ չհամապատասխանող:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից 09.07.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել «ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ 2019/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը.

2. Բողոքը «ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ 2019/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելուն պարտավորեցնելու պահանջի մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**